



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Ժ Ո Ղ Ո Վ Ո Յ

Կ Ե Դ Ր Ո Ն Ա Կ Ա Ն Վ Ա Ր Չ Ո Ւ Թ Ե Ա Ն

1871---1872 Ա.ՄԻ

Ա. Ռ.

Ա Չ Գ Ա Յ Ի Ն Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ի Ր Ժ Ո Ղ Ո Վ

Մ Ա Ս Ն Ա.

Վ Ա Ր Չ Ա Կ Ա Ն Տ Ն Օ Ր Է Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ազգային վարչ. ֆաղ. ժողովս իւր պաշտօնավարութեան նախընթաց 1870—71 տարւոյն գործողութեանց համարատուութեան տեղեկագիրը մատուցանելէ ետեւ, կը փութայ այժմ՝ անցեալ սահմանադրական տարւոյ (1871—72) գործողութեանց համարատուութիւնն այս տեղեկագրովս պատկառելի Ատենիդ ներկայացնել:

Յայտնի է թէ սոյն տեղեկագիրը՝ 1871 մայիս ամսոյ սկիզբէն մինչեւ 1872 ապրիլի վերջը՝ արողջ տարուան մը մէջ ֆաղ. ժողովոյս ըրած 63 նիստերուն գործողութեանց բովանդակութիւնը կը պարունակէ ըստ դասակարգութեան Ա. տեղեկագրին:

Ֆաղաքական ժողովս իւր անցեալ տարւոան համարատուութեան միջոցին հրաժարականն ալ թէ եւ մատուցած էր. սակայն պատկառելի Ատենիդ կողմէն չընդունուելով երբ մինչեւ ՚ի վերաքննութիւն

Սահմանադրութեան իւր պաշտօնը շարունակել հրաւիրուեցաւ, ժողովս չկրցաւ այդ հրաւերը մերժել եւ իւր վերակազմութեանը մասին պատշաճ դատած փոփոխութիւններն ընելէ ետեւ, յանձն առաւ իւր պաշտօնը տարի մի եւս շարունակել:

Պարտք կը համարիմք ուրեմն, նախ եւ յառաջ ֆաղ. ժողովոյս վերջին շրջանին մէջ ներկայացած բոլոր խնդրոց վրայ վիճակագրական տեղեկութիւն մը տալ:

Դիւանատան տումարներուն մէջ արձանագրուած ընդհանուր խնդրոց թիւն է	
1432. որ հետեւեալ կերպիւ կը բաժնուի:	
Գաւառական խնդիր	891
Տեղական	398
Մասնաւոր	143
	<hr/>
Համագումար	1432

Պատրիարքարանի Հայերէն թղթակ.

ցուծեան թիւն է	849
Տաճկերէն թղթակցութիւն	
Թագրիր	150
Նամակք առ զանազանս	100
Հեռագիրք	127
Վճռագիրք	15
Համագումար	302
	1241

Ինչպէս որ յայտնի է՝ վարչութեան ըրած բազմաթիւ տնօրէնութեանց մէջէն այն խնդիրները միայն կամփոփուին, պատկառելի Ատենիդ ներկայացած տեղեկագրին մէջ, որ շատ կամ քիչ կարելորութիւն կամ ազդեցութիւն կրնան ունենալ ազգային գործոց վրայ, չորս գլխաւոր մասանց բաժնուած, որք են՝ վարչական, Հանրական, Գաւառական եւ Մասնաւոր, Նոյնպէս եւ Բ. Դրան մատուցուած թագրիրներուն եւ զանազան պաշտօնատարաց հետ եղած թղթակցութեանց կարելորագոյնները:

Երեսփոխան էֆէնտիներ, աեղեկագրոյս հրատարակութենէն ետեւ, պիտի կարենաք վերահասու ըլլալ թէ՛ Ժողովս խղճի մտօք ջանացած է իրեն ներկայացած բոլոր խնդիրներն Ազգին հանրական շահուց համաձայն կարգադրելու աշխատիլ. զերծ որ եւ իցէ անձնական նկատմունքէ, հաւատարիմ մնալով միշտ այն սկզբան, որ իւր պաշտօնավարութեան առաջին օրը հրատարակած էր, թէ Սահմանադրութեան ոգւոյն եւ օգտաւէտ սկզբանց միայն պիտի հետեւէր եւ ոչ թէ տառական գործադրութեանը:

Ուրեմն ներքէջք մեզ ըսել թէ՛ Քաղաքական Ժողովս խիստ բարեբաղդ դրտնուեցաւ Ամեն Սրբազան Պատրիարք Հօր աջակցութեամբը Սահմանադրական վարչութեանց սկզբունքը Ազգին ընտելացընելու:

Վարչութեան տեղեկագրին պէտք չունիք, Երեսփոխան էֆէնտիներ, իմանալու համար թէ որպիսի վափուկ խնդիրներ տնօրինուեցան եւ ոմանք ալ բոլորովին

լուծուեցան Ազգին օգտին եւ իրական շահուցն համաձայն, շնորհիւ վիճարանութեան ազատութեանը, զոր ոմանք թէպէտ եւ դատապարտեցին, բայց մեր կարծիքն այն է թէ՛ առանց այս միջոցին անհնար էր այն արդիւնքը ձեռք բերել, որով Ազգր խաղաղեցաւ եւ սկսաւ Սահմանադրական վարչութեան օգուտները վայելել:


Ուստի իւր փորձառութեամբը կը համարձակի յանձնարարել պատկառելի Ատենիդ որ բարեհաճի ծայրայեղ սկզբունքներէն միշտ խորշելով այնպիսի տնօրէնութիւն մ'ընել որ, կարելի ըլլայ արդի վարչութեան յաջորդները կարելի եղածին չափ քիչ օրուան մէջ բազմեցնել Քաղաքական Ժողովոյ սեղանին վրայ:

Քաղաքական Ժողովս Ազգային վարչութեան կնճապից օրերուն մէջ պաշտօնի կոչուած, գոհութեամբ սրտի կը տեսնէ իւր պարտաւորութիւններն անթերի կատարած ըլլալը եւ բարեբաղդ կը համարի իւր օրովն այնպիսի մեծամեծ խնդիրներ յուզուելէ ետեւ, Ազգը խաղաղութեան վիճակի մէջ թողլուն համար, մինչեւ Տաճկաստանի բոլոր միւս ոչ Մահմետական հասարակութիւնները վրդովեալ են:

Իրաւ է որ գաւառական հարստահարութեանց եւ կիլիկիոյ կաթողիկոսութեան խնդիրները պահ մը Ազգին մէջ յուզման տեղի տուին, սակայն շնորհիւ պատկառելի Ատենիդ խոհեմական տնօրէնութեանց, ճշմարտութիւնը շուտով երեւան ելնելով, բոլոր յուզեալ մտքերը հանդարտեցան. եւ անտարակոյս եմք թէ՛ վեհ Սուլթանին արդարասէր կառավարութիւնը եւ Այրարատեան Մայր Աթոռոյ վեհ Գահակալն՝ այս խնդրոց ծանրութիւնը լաւ կշռելով՝ այնպիսի կարգադրութիւններ պիտի ընեն որով կառավարութեան, Ազգին եւ Մայր Աթոռոյ շահերը պիտի կարենան համաձայնիլ:

Քաղաքական Ժողովս եթէ ցաւ մ'ունի իւր հրատարած վայրկենին, միմիայն կըրթական խորհրդոյ ծրագիրը գործադրութեան մէջ կարենալ դրած ըլլալն է, ա

տր ալ պատճառն յայտնի է թէ՛ յիշեալ ծրագիրը, որ անցեալ տարի պատկառելի ժողովոյդ ներկայացած է, այնպիսի ամենակարեւոր առաջարկութիւններ կը պարունակէր որոց ընդունելու թեան կամ մերժման որոշումը Երեսփոխանական ժողովոյ կողմանէ շարուած դժուարին էր կրթական խորհուրդը վերակազմել եւ անոր բռնելիք ընթացքը նախագծել: Կը յուսամք որ այս կարեւոր պակասը կը լեցուի մեր յաջորդաց օրովն, եւ ազդ. դաստիարակութեան խնդիրն իւր կարեւոր ուղղութիւնը կատանայ:



ՀՐԱԺԱՐՈՒՄ ԵՒ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ ՔԱՂ. ԺՈՂՈՎՈՅ:

Ազգային ընդհ. ժողովոյ որոշմամբ հրաժարեալ Քաղ. ժողովը վերահաստատուելով եւ նորին հինգ անդամոց վրայ նորէն չորս անգամ եւս յաւելնալով՝ վերակազմուեցաւ հետեւեալ ինն Անդամներէն,

- | | |
|--------------------|-------------|
| Ապրօ Սահակ | էֆ. |
| Նորատունկեան Յակոբ | » |
| Եուսուֆեան Տգրան | » |
| Ֆրէնկեան Յակոբ | » |
| Մկրտիչեան Յակոբ | » |
| Կոստանդեան Յակոբ | » |
| Սթիմարաճեան Գէորգ | } նորընտիրք |
| Ասլանեան Մանուկ | |
| Մովսէսեան Միքայէլ | |
| | |

Նախագահ Սրբազան Հօր հրաւիրմամբ յիշեալ ինը ժողովականներէն եօթը հոգի ներկայանալով՝ ատենը բացուեցաւ եւ որոշուեցաւ որ ժողովոյն Գիւանն ըստ առաջնոյն իւր պաշտօնը շարունակէ, այսինքն՝ Ապրօ էֆէնտին Ատենապետ, Եուսուֆեան էֆէնտի Ատենադպիր: Ժողովականք արդէն իրենց մէջ եղած համաձայնութեան համեմատ 1870 մարտ 14 ին յայտարարութիւնը իրրեւ իրենց ընթացից հիմնադիժը վերահաստատեցին, ՚ի հարկէ ըստիպեալ թեթեւ փոփոխութեամբ մը որ

էր՝ Քաղ. ժողովն երկու մասի բաժնուելով՝ շարաթն երկու նիստ բնել մէկուն մէջ մի միայն հանրական կարեւորութիւն ունեցող խնդրոց զբաղելու եւ միւսին մէջ մասնաւոր եւ տեղական խնդրոց:

Հետեւապէս որոշուեցաւ, որ իւրաքանչիւր ժողովական պարտաւոր պիտի ըլլայ իւր յօժար կամօքն ընդունած մասնական նրատին անպատճառ ներկայ դտնուիլ, իսկ միւսոյն եթէ իւր զբաղմունքը ներեն. անտարակոյս բաց ՚ի այն նստերէն, ուր ժողովականաց բոլորին ներկայութիւնը անհրաժեշտ պիտի ըլլար:

Ս. Պատրիարքը խորհրդական մ'ընտրել առաջարկեց Սիմէօն Սրբազանի տեղ, որ պաշտօնով Ատանա կը գտնուի եւ կերելի թէ չկրնար շուտով դառնալ: Գիւանական ճիւղին համար ալ տեսուչի մը կարեւորութիւնը յայտնեց եւ յաւելցուց որ նորընտիր խորհրդականին յանձնուի նաեւ այս ճիւղին տեսչութիւնը: Սոյն խորհրդականին յանձնել նաեւ Սրբազան Պատրիարքին ժողովոց նիստերուն ներկայ չգտնուած միջոցին փոխանորդարար նախագահութիւնը նել:

Ժողովն առ այժմ նոր խորհրդականի ընտրութեան հարկ չտեսնելով Սրբազան Պատրիարքին յանձնեց որ իւր բացակայութեան միջոցին ժողովոյն նիստերուն իր կողմէն Պատրիարքական փոխանորդը զրկէ իրրեւ փոխ. նախագահ: Իսկ Գիւանական ճիւղին տեսչութեան խնդրոյն գալով՝ ժողովը նկատելով որ Գիւանատան ընդհանուր բարեկարգութեան խնդիր մ'էր, պատշաճ դատուեցաւ առ այժմ ՚ի կախ թողուլ:

ԱՍՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾ. ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ:

Երեսփոխանական ընտրութեանց Գործադիր Յանձնաժողովոյ Ատենապետ խօճատարեան Ոգսէն էֆ. ի առաջարկութեան համեմատ Ղաղարոսեան Գրիստոստուր եւ փափազեան Ատեփան էֆէնտինները նոյն յանձնաժողովոյն անգամ ընտրելէ ետեւ,

Քաղաքական ժողովը որոշեց իրեն յանձնել գաւառներէն եկած Սահմ. գործադրութեան վերաբերեալ տեղեկագրերուն քննութիւնը, եւ նոյն յանձնաժողովոյն դիտողութեանց համեմատ պէտք եղած պատասխանները գրել Առաջնորդաց :

Յետոյ Ղազարոսեան եւ փափագեան է ֆէնտիները ներկայանալով յայտնեցին թէ իրենց անդամակիցներէն Արշակ էֆ. արդէն հրաժարած ըլլալով՝ ուրիշ երկու անդամոց կարօտ են եւ առաջարկեցին Ղեւոնդ վոզ. եւ Բէխսեան Բովակիմ էֆ :

Ժողովն ընդունեց եւ որոշեց յիշեալ երկու անձինքը հաստատել 'ի նոյն պաշտօն եւ որոշեց գրով հրահանգ տալ Յանձնաժողովոյն, որ գաւառաց մէջ Ազգ. Սահմ. գործադրութեան համար պէտք եղած միջոցներն 'ի գործ դնէ եւ պէտք եղած հրահանգները ղրկէ ուր որ հարկ է :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Տնտես. խորհուրդն Ազգ. պարտուց բարձման Յանձնաժողովոյն հետ ունենալիք յարաբերութեանց մասին գրուած Պատրիարքական գրոյն պատասխանելով՝ իր իրաւասութիւնը պաշտպանելու մտօք քանի մի դիտողութիւններ ըրած էր :

Ժողովն որոշեց պատասխանել ապահովելով զինքն որ իր իրաւասութեան դրպչելու կէտ մը չկայ, եւ թէ հարկ է որ ըստ նախորդ ազդարարութեան պէտք եղածն գործադրէ անմիջապէս :

Հետեւապէս Տնտեսական խորհրդոյ կողմանէ Քաղ. ժողովոյ ներկայացեալ հետեւեալ առաջարկութիւններն ընդունուեցան :

1. Ազգ. տրոց հաւաքման համար թաղերուն մէջ, Տնտեսական խորհրդոյ կողմէն մասնաւոր հոգաբարձութիւններ հաստատել :

2. Ընդհ. ժողովոյ ատենագրութիւնները շրջաբերականաւ ղրկել բոլոր առաջնորդական վիճակաց ազգային ժողովոց եւ խորհրդոց :

Նմանապէս Տնտես. խորհրդոյ առաջարկուած

կուծեան վրայ, հետեւեալ շորս անձինքը նոյն խորհրդոյն անդամակից որոշուեցան որք են,

- 1. Եազմաճեան Աւետիս էֆ.
- 2. Ազայէկեան Յովհաննէս "
- 3. Պոյաճեան " "
- 4. Կրճիկեան " "

Որով Տնտես. խորհրդոյ անդամոց թիւը 3 էն 7 ի վերածուեցաւ :

Եազմաճեան Աւետիս էֆ. որ Տնտես. խորհրդոյ անդամակցութեան հրաւիրուած էր Քաղ. ժողովոյ որոշմամբ, պատասխան գրելով այս հրաւերն չընդունիլը կը յայտնէ, եւ կը խնդրէ որ ժամանակաւ իւսկ Ս. Խաչի եկեղեցականութեան պաշտօնը վարող իւր եւ իւր ընկերակցաց համարատուութիւնը առնէ վարչութիւնը եւ քրննութեան արդիւնքը հրատարակէ, որպէս զի այս մասին տեղի գտած բաժնասանքներէն զերծ մնայ, առանց որոյ չպիտի կրնայ այսուհետեւ որ եւ է ազգային պաշտօն ընդունիլ :

Սոյն բողոքագրոյն վրայ որոշուեցաւ Տնտեսական խորհրդոյն յանձնարարել, որ պէտք եղած քննութիւնն ընէ :

Տնտես. խորհուրդն ազգային (75 եւ 25 դշի) տրոց հաւաքման դժուարութեանց մասին ժողովոյն հետ բանակցելով՝ ժողովրն որոշեց որ Տնտես. խորհուրդն յիշեալ տրոց դիւրութեամբ հաւաքման համար պատշաճ դատած միջոցներն կատարեալ արտօնութեամբ 'ի գործ դնէ, թէ՛ թաղ. խորհրդոց եւ թէ՛ արհեստաւորաց դասուց դիմելով՝ ինչպէս որ ինքը յարմար դատէ :

ՄՈՒԲԱԹԱՅԻ ԵՒ ՔՈՆՉԷԼԵՐԻ ՏՐՈՑ ԽՆԻՐ

Գաւառաց մութաթայ անուն եւ Պոլսոյ Եկեղեցեաց քանչէլէր անուն տարեկան տրոց վերաքննութիւն եւ արդար բաշխում մ'ընելու Տնտես. խորհրդոյ առաջարկութիւնը, ընդունուելով որոշուեցաւ նոյն խորհրդոյն յանձնել որ պէտք եղած վերաքննութիւնն ընելով՝ նոր բաշխման ծրագիր մը չինէ եւ ներկայացնէ ժողովին, Որն որ ստանալէ ետեւ, որոշուեցաւ

որ եկեղեցեաց տարեկան քանչէլէրի տրոց յաւելման մասին Տնտես , խորհուրդը պէտք է բանակցի նախ՝ թաղ . խորհրդոց հետ , եւ յիշեալ տրոց յաւելման վրայ անոնց ունեցած տրամադրութիւնը քննէ եւ ապա յայտագրէ ֆաղ . Ժողովոյն , որպէս զի ըստ այնմ պէտք եղածը տնօրինուի :

Հետեւապէս խորհրդոյն յայտագրոյն եւ առաջարկութեան համաձայն եկեղեցեաց տարեկան քանչէլէրի տրոց նոր բաշխումը որ 15000 ղուրուշ աւելի հասոյթ կը բերէր , ընդունուեցաւ եւ որոշուեցաւ գրել իրեն որ առանց գանդատանաց տեղի տալու չըրջարեական ուղղելով թաղ . խորհրդոց գործադրել տայ : Աս մասին Պէշիկթաշի եւ Օրթագիւղի թաղական խորհուրդներէն եկած գանդատանաց նամակները Տընտեսական խորհրդոյն յանձնուելով իրենց դիտողութիւնը խնդրուեցաւ :

Իսկ տարեկան մուքաթայի տրոց վերաքննութիւնն ալ Տնտես . խորհրդոյն յանձնել եւ միանդամայն ծանուցանել որոշուեցաւ որ կեդր . սնտուկին կողմէ վճարուած ամսական 5000 ղուրուշէն զատ նաեւ մուքաթայի տուրքը Ս . Պատրիարքը պիտի գանձէ , եւ իրեն յատուկ եղած ծախքերն ընելէ ետեւ՝ տարեգլխին հաշիւը պիտի տայ Տնտես . խորհրդին եւ աւելորդ գումար մը եթէ ըլլայ , պիտի յանձնէ կեդր . Մնտուկին :

Եւ ՚ի վերջոյ Տնտեսական խորհրդոյ յայտագրին համաձայն ֆաղ . Ժողովը պատշաճ դատեց Սրբազան Պատրիարք Հօր ամսականն 10000 ղուրուշի վերածուելու առաջարկութիւնն ընդունիլ , Պատրիարքարանի մատակարարութեան , երթեւեկի եւ ողորմութեան եւն , ծախքերն իւր վրայ թողլու պայմանաւ :

ԱԶԳԱՅԻՆ ՎԱԳՖՆԵՐՈՒ ՄԻԻԹԵՎԵԼԼԻՒՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Այս խնդրոյն վրայ Տնտես . խորհուրդն յատուկ յայտագրով վարչութեան ուշադրութիւնը հրաւիրելով՝ առաջարկած էր որ Սահմանադրութեան 467 յօդուածոյն

համեմատ այն միւթէվէլլիութիւնը զոր մասնաւոր անձինք կը վարեն ցարդ , էապէս ջնջուի , եւ ազգային վագֆներն իրենց վերաբերեալ թաղ . խորհրդոց կամ հոգաբարձութեանց տեսչութեան յանձնուելով հրահանգ ղրկուի անոնց որ երբ վագֆի վերաբերեալ գործողութիւն մը պատահի , իրենք ամեն օրինական պայմաններով ֆէրաղի գործողութիւնները կատարելէ ետեւ՝ կայուածագրերն իրենց յայտագրով ղրկեն ՚ի Պատրիարքարան , որպէս զի Սրբազան Պատրիարքն իբրեւ ընդհանուր միւթէվէլլի ազգային վագֆներուն՝ կնքէ զանոնք եւ վաւերացնէ :

Ժողովը նկատելով որ այս առաջարկութիւնն օրինաւոր եւ Սահմանադրութեան ոգւոյն համաձայն է , եւ նկատելով որ ասկէ առաջ Տեղական գործոց Մասնաժողովոյն կողմէն ալ այս առաջարկութիւնն եղած եւ այն ատեն որոշում տրուած էր որ չըջարեական մը խմբագրուի , եւ խմբագրուած ալ էր , բայց ինչ ինչ դիտողութեան վրայ կախ մնացած էր , այս անգամ նոյն առջի որոշումը վերահաստատելով՝ մասնաւոր միւթէվէլլիութեանց ջնջուած ըլլալը ծանուցանող նոր չըջարեականաւ մը թաղ . խորհուրդներն հրաւիրել որոշեց , որպէս զի իրենց թաղերուն մէջ գտնուած ազգային վագֆներուն վիճակին վրայ ընդհանուր տեղեկութիւն տան կեդր . վարչութեան եւ միանգամայն վերոյիշեալ կերպով ազգային վագֆներու վերաբերեալ կալուագրերն Պատրիարքարան ղրկեն Պատրիարքական կնքով վաւերացնելու համար :

Նոյնպէս որոշուեցաւ գրել Փափագեան Գէորգ էֆէնտիին որ իւր մասնաւոր միւթէվէլլիութեան տակ գտնուած ազգային վագֆներուն վերաբերեալ արձանագրութիւնքն ու անոնց հասութից հաշիւներն ղրկէ Ազգ . վարչութեան , որպէս զի Տընտեսական խորհրդոյ միջոցաւ եւ ըստ Սահմանադրութեան յանձնուին անոնք՝ որոց որ անկ է , եւ անոնց վերաբերեալ սէնէտներն ալ Պատրիարքական կնքով վաւերացուին այսուհետեւ :

Տնտես . խորհրդոյ յայտագրոյն վրայ ֆա

փաղեան Գէորգ Էֆ. էն եկած վագֆի վե-
րաբերեալ թղթոց եւ տուճարաց սնտուկի
մասին, որոշեցաւ փափաղեան Էֆ. ին գը-
րել որ ըստ օրինի նոյն թղթերը եւ հաշիւ-
ները յանձնելու համար օրինաւոր հաշուե-
ցոյց, տեղեկագիր մը եւ իր կողմէն ալ
փոխանորդ մը ղրկէ, որպէս զի զանոնք
յանձնած ժամանակը պէտք եղած ընկա-
լագիրն ընդունի:

Այս որոշումը Տնտես. Խորհրդոյն հա-
ղորդելով ծանուցուեցաւ միանգամայն որ
առ այժմ, պատահած ֆէրաղի գործողու-
թիւնները կախ թողու, մինչեւ որ փա-
փաղեան Գէորգ Էֆէնտիէն պէտք եղած
արձանագրութիւններն առնուին: Նոյնպէս
հրաւիրել Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը
որ ներկայ գտնուի փափաղեան Էֆ. էն վա-
զըֆին հաշիւները առնուած ժամանակը:


ԵՏՏԻ ԳՈՒԼԵՒ Ս. ՅԱԿՈՒԲԱՅ ՎԱՆՔ

Ժողովն ասկէ առաջ որոշած էր որ ԵՏ-
տի Գուլէի Ս. Յակոբայ վանքը Հիւանդա-
նոցի հոգաբարձութեան յանձնելու համար
եղած նախորդ որոշման դէմ դժկամակող
անձինքը բռնի դուրս հանելու համար ոս-
տիկանութեան գրուի: Տնտես. Խորհուր-
դըն որ նոյն անձանց հաշիւներն քննելու
վրայ էր, իւր յայտագրով վերոյիշեալ վեր-
ջին որոշման կախ ձգուիլն խնդրած ըլլա-
լով, միւս կողմէ Ժողովն այս անգամ լուր
առնելով որ այս միջոցին նոր ճարակելու
սկսած քօլէրայի ախտէն բռնուող հիւանդ-
մը ղրկուեր է Ազգ. Հիւանդանոցը, որոշ-
ուեցաւ պատասխանել Տնտես. Խորհուր-
դին որ ամեն ջանք տանի Ս. Յակոբայ
վանքը անմիջապէս պարպել տալու, որպէս
զի քօլէրայէ բռնուող հիւանդներն հոն
պատասպարուին, հիւանդանոցը չպլշկուե-
լու համար, եւ եթէ դարձեալ ընդդիմա-
նան ոստիկանութեան դիմէ եւ ժողովոյն
որոշումը գործադրէ:

ԿՐԻԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԵԱՆ
ԽՆԴԻՐ


Այս խնդիրը նկատողութեան առնուե-

լով աւելորդ դատուեցաւ առ այժմ անոր
վերակազմութեանը դրաղիլ քանի որ նա-
խորդ կրթական խորհրդոյն պաշտօնավա-
րութեան տեղեկագիրը՝ որ ընդհ. Ժողո-
վոյն ներկայացած է, դեռ որոշում մ'ա-
ռած չէ, եւ մինչեւ որ նոյն տեղեկագրին
պարունակած առաջարկութեանց վրայ
ընդհ. Ժողովը հրահանգ մը չտայ, կրթ.
խորհուրդը գործ մը չկրնար տեսնել: Ուս-
տի որոշեցաւ կրթ. Խորհրդոյ տեղեկագ-
րին օր առաջ ընդհ. Ժողովոյ ատեանը
դրուիլն առաջարկել, եւ անոր ընելու ո-
րոշման համաձայն վերակազմութիւնն ընել:



Մ Ա Մ Ն Բ .

ՀԱՆՐԱԿԱՆ



ԵՐՈՒՍԱՂԵՄԱՅ ՎԱՆՈՒՅ ԵԼՄՏԱԵԱՆ ԽՆԴՈՐ

Ասկէ տարի մ'առաջ Երուսաղէմայ Ս.
Պատրիարքը վանքին 17-18 հազար լիրայի
պարտական ըլլալը յայտնելով սոյն պար-
տուց վճարման կարգադրութեան համար
քանի մ'առաջարկութիւններ մատուցած
էր վարչութեան եւ անոնց գործադրու-
թիւնը կը խնդրէր: Քաղ. Ժողովն ալ պա-
տասխան տուած էր որ այս կարեւոր խնդ-
րոյն վրայ տնօրինութիւն մ'ըլլալէ առաջ
պէտք է որ վանքին ելեւմտից հաշուեցոյ-
ցը եւ պէտք եղած տեղեկագիրը ղրկէ,
որպէս զի վարչութիւնը կարող ըլլայ օրի-
նաւորութեան վրայ հիմնել իւր որոշումը
եւ պատասխանատու չմնայ ապագային
առջեւ: Երուսաղէմայ Ս. Պատրիարքը թէ
եւ խոստացեր էր այդ հաշիւներն ղրկել,
բայց ցարդ չէր ղրկած:

Ուստի Քաղ. Ժողովը Սիմէօն Եպիսկո-
պոսի այս միջոցիս Երուսաղէմ գտնուիլն
պատեհ առիթ համարելով որոշեց Երու-
սաղէմայ Պատրիարքին յիշեցնել այս խըն-
դիրը եւ Սիմէօն Եպիսկոպոսին ալ նմանա-

պէս գրել եւ յանձնարարութիւն ընել որ փոյթ տանի խնդրուած հաշիւները ժամ յառաջ ստանալ եւ իր հետ մէկտեղ Պօլիս բերել մայիսէն առաջ :

Ի վերջոյ Երուսաղէմայ պատրիարքական փոխանորդ Գեր . Խորէն վարդապետը ֆաղաքական ժողովոյ ներկայանալով ծանոյց թէ Ս . Պատրիարքը գրած է իրեն ապահովութիւն տալ . Ս. զգային վարչութեան , աթոռոյն բոլոր հաշիւներուն համար՝ որ առաջիկայ մայիսէն ետեւ պիտի ղրկէ , Ս . Զատկի պատճառաւ չի կարենալով անկէ առաջ ուղարկել , ինչպէս որ վարչութիւնը վերջին անգամ մ'ալ իրմէ պահանջած էր :

ԵՐՈՒՍԱՂԷՄԱՅ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ԵՒ ԼԱՏԻՆ ԿՐՈՆԱՒՈՐԱՅ ՄԷՋ ԾԱԳԱԾ ԽՆԴԻՐԸ

Սոյն խնդրոյն վրայ Երոսաղէմայ Պատրիարքէն սպասած տեղեկութիւններն ըստանալէ ետեւ որոշուեցաւ Բ . Դրան յայտնել թէ կեդր . վարչութիւնը չի կրնար պարզապէս հանդիսատես ըլլալ այս խընդրոյն մէջ , ո՛ւր Ս. զգին հանրական իրաւունքներն Լատիններէն կը բռնաբարուին : Յիշեցնելով թէ Լատինք թոյլտուութիւն մը կը խնդրեն , Բ . Դուռը առաջին վիճակին անփոփոխութիւնը կը հրամայէ 'ի նպատակատինաց , նոյն անփոփոխութեան սկզբունքը Ս. զգն ալ կը յարգէ , բայց մեր ազգային քանի մը իրաւունքներ չեն գործադրուիր եւ անփոփոխութիւնը քանի որ ամենուն համար է եւ ոչ թէ միայն Լատինաց , թող նախ մեր իրաւունքներն գործադրուին որք մեզ համար թոյլտուութիւն չեն , այլ սեպհական իրաւունք . եւ ապա Լատինաց խնդրած թոյլտուութեան համար վարչութիւնը կը բանակցի Երուսաղէմայ Պատրիարքին հետ .

Գաբու քէհեասի Ալիքսան էֆ . արտաքին գործոց պաշտօնէի խորհրդական Սէրվէր էֆ . ի մէկ յայտարարութիւնը հաղորդեց ժողովոյն , ըսեր է թէ Երուսաղէմայ Պատրիարքին Լատինաց խնդրոյն համար յառաջ բերած փաստերը սկիզբէն մինչեւ հիմայ տեսակ տեսակ են , այսինքն շարու-

նակ կը փոխուին , որով կը հասկցուի թէ հաստատուն իրաւունք մը չունի . թէ Բ . Դուռը պարտաւորեալ է «*non est*» պաշտպանել եւ այս խնդիրն ալ անոր մէջն է : Ուստի հիմա պիտի հրամանագրուի ատեղական կառավարութիւնն որ այսուհետեւ ձեր իրաւունքները Ս. զգին սկզբունքով չպիտի պաշտպանուին , եւ ձեզի ալ 'ի պաշտօնէ կիմացնեմ որ Պատրիարքին հաղորդէք :

Ալէքսան էֆ . ծանրապէս բողոքերէ ըսելով թէ՛ շատ կը ցաւի որ մեր Հայ ազգը Լատինացւոց կողմէն մինչեւ ցարդ իր իրաւունքներն յափշտակուելուն համար շատ անգամ բողոքած է Բ . Դրան , եւ իր բողոքներն անլսելի մնացեր են մինչեւ ցարդ իսկ այժմ Լատինացւոց խնդրոյն համար Բ . Դուռը այսպէս խստութիւն կը բանեցնէ և իւր հպատակներն որ կայսերական կառավարութենէն զատ ուրիշ պաշտպան մը չունին , եւ անկէ անբաժանելի են յաւիտեան այսպէս կը լքանէ :

Ժողովն որոշեց նախ՝ որ Ս . Պատրիարքն անձամբ Սէրվէր էֆ . ին երթայ եւ բողոքէ իր յայտարարութեան դէմ : Երկրորդ՝ Ս . Պատրիարքն այս խնդրոյն կարգադրութեան համար այն պայմանաւ կրնայ միջամտել Երուսաղէմայ Պատրիարքին որ Լատինաց կողմէ յափշտակուած Հայոց բոլոր իրաւունքներն վերադառնան եւ հաստատուին :

Երուսաղէմայ խնդրոյն վրայօք նախընթաց նստին որոշման համեմատ Ս . Պատրիարքը Սէրվէր էֆ . ին երթալով ըրած տեսութիւննին պատմեց : Ս . Պատրիարքը քովսիօն մը առաջարկեր է խնդրոյն կարգադրութեան համար . Սէրվէր էֆ . չէ ուզեր՝ գործը կը ծանրանայ ըսելով , աւելի լաւ համարեր է Բ . Դրան եւ Պատրիարքարանի մէջ տեղ լմնցնել այս խնդիրը եւ այս նպատակաւ Ս . Պատրիարքին խորհրդածութեան յանձներ է : Եւ ըստ որում բանակցութեան միջոցին Սէրվէր էֆ . յայտնեց է թէ չեմ յիշեր անանկ խնդիր մը Երուսաղէմի վերաբերեալ , որ Հայոց Ս. զգին

զրկանք եղած ըլլալուն համար Պատրիարքարանէ թագրիր եղած ու անգործադրելի մնացած ըլլայ. հետեւապէս որոշուեցաւ Պատրիարքարանի արձանագրութիւններէն մինչեւ ցարդ Երուսաղէմի վերաբերեալ Բ. Դրան գրուած եւ անգործադրելի մնացած խնդիրները քաղել եւ անոնց ցուցակը Բ. Դրան ներկայացնել.

Մ. Գրաբօն անուն Գաղղիացին իբրեւ Գաղղիոյ հիւպատոս՝ Ս. Երուսաղէմ երթալու որոշուած ըլլալով Ս. Պատրիարքին եւ Ժողովոյն ներկայացաւ բարեկամական տեսութիւն մ'ընելու համար.

Ժողովը գոհ եղաւ իւր այն յայտարարութենէն թէ Երուսաղէմայ մէջ միայն մէկ կողմին փաստափան շկանգնիլ այլ հաշտարար ըլլալու ջանք ընելը ոչ միայն իւր ըսկզբունքն է, այլ եւ իւր կառավարութեան տուած հրահանգն է այս.

ԲԵՐ ԱՅԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ԽՆԴԻՐ

Բերայի ֆահանաները ներկայանալով՝ յայտնեցին թէ Բերայի Բանկալթիի Ազգ. գերեզմանատան մէջէն ճամբայ բանալու նպատակաւ եկեր պատին մէկ կողմը փլուցեր, խուլիներ գամեր են, եւ ֆահանայք անմիջապէս նոյն խուլիները հաներ նետեր են ըսելով թէ Ս. Պատրիարքէն մեղի հրամանագիր մը չեկած չենք կրնար թողուլ որ այդպէս բան մը 'ի գործ դրուի, եւ հարցուցին Ս. Պատրիարք Հօր թէ ի՞նչ ճամբայ բռնելու են, եթէ նորէն գան բռնութեամբ խուլիները գնելու ըլլան, քանի որ ժողովուրդը կրնայ գրգռել այս մասին: Ս. Պատրիարքը ներկայ ժողովականաց խորհրդակցութեամբ պատուիրեց ֆահանաներուն որ քաղցրութեամբ դարձեալ ըստ առաջնոյն պատասխան տան թէ Պատրիարքարանէն մեղի ազդարարութիւն մը չեղած՝ չենք կրնար մենք որ այս Ազգ. սեպհականութեան պահապաններն ենք, թողուլ որ քար մը տեղէն խախտի.

Նաեւ որոշեցաւ որ Ս. Պատրիարքն անձամբ երթայ Արտաքինգործոց պաշտօնէին եւ միանգամայն Մեծեպարքոսին խօսի այս

մասին, եւ բողոքէ գերեզմանատունը որ եւ իցէ պատճառաւ Տէրութեան սեպհականացնելու պատրուակաւ եղած գործողութեանց դէմ. Որոց փոխարէն որչափ որ Արտաքին գործոց պաշտօնեան զանազան դիտողութիւններ ըրաւ ալ նէ, խնդիրն ուրիշ հետեւանք մը չունեցաւ:

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Դատաստանական խորհրդոյ գործողութեանց տեղեկագրին ամբողջապէս տարակուսիլը սովորութիւն եղած չըլլալով, այն մասը միայն պատշաճ կը դատարմք նշանակել ուր տարուան մէջ իրեն ներկայացած զանազան խնդրոց վրայ, կատարեալ վիճակագրական տեղեկութիւնք ամփոփուած ըլլալով, բաւական կըլլան ազգային Դատաստանական խորհրդոյ ունեցած կարեւորութեան աստիճանը երեւան հանելու:

ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԴԱՏ. ԽՈՐՀՈՒՐԴ

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր եւ վսեմաշուք Ատենակալք Ազգ. վարչութեան ֆաղ. Ժողովոյ.

Ըստ որոշման Ազգ. վարչութեան Պատ. կառելի ֆաղ. Ժողովոյդ. նախորդ եւ արդի Դատաստանական խորհրդոյ կազմութենէն յետոյ՝ անցեալ 1871 մայիս 5 ամսաթուէն սկսեալ մինչև ներկայս 1872 Ապրիլ վերջն, այն է տասներկու ամսոյ բոլորական շրջանիս մէջ՝ Դատ. խորհուրդն 47 նիստ ըրած և քննական ատեան բացած ըլլալով՝ թէ ամբաստանողք թէ ամբաստանեալք այլ և այլ դատական խնդիր ներկայացուցին, որոց տեսակները համբաշխաբար նշանակել պատշաճ դատելով ներկայ տեղեկագրիս մէջ յայտնապէս կը նըշմարուի ըստ օր.քանութեանն, այս օրինակ.

Ամուսնական	82	Նշանտուուի	27
Առևարական	35	Սնբարոյական	24
Կալուածական	11	Ժառանգական	8
Պատուոյ վերաբերեալ	7	Զանազան	19
	135		78
			213

Ահաւասիկ որ ե իցէ պարագայից առ թիւ ծագած այս 213 դատական խնդրոց քննութեան նկատմամբ՝ երթեւեկողաց ներկայութեանը 344 անգամ տեղի ունեցած է խորհրդարանին մէջ, ուր հետզհետէ պարտուպատշաճ հարցաքննութիւններըն 'ի գործ դրուելով՝ մանրամասնաբար դիտողութեան առնուած են խնդիրներն, եւ ըստ ամենայն հանգամանացն անաչառ քննութեան ենթարկելով, կան որ համոզմամբ եւ իրաւախոհութեամբ լուծուած են, կան որ՝ ըստ հարկին եւ ըստ պատշաճին իրաւացի վճիռներով որոշուած եւ վերջաւորած են. կան այնպիսի խնդիրներ ալ որ 'ի կախ թողուիլ հարկ եղած են բանաւոր պատճառներով, որոց լուծումը մըտաց համոզմանէ եւ պարագայից պատշաճութենէն կրնային կախումն ունենալ՝ որոց նկատմամբ եթէ խորհուրդս աճապարանօք եւ հարեւանցի դատողութեամբ որոշումն տար, թերեւս վնասակար հետեւութեան մը առիթ լինէր:

Իսկ այնպիսի մասնաւոր վեճեր՝ զորս 'ի մօտոյ քննել եւ ստուգել կարեւոր կը թըւէին, ըստ տեղոյ իւրաքանչիւր թաղ. խորհրդոց յանձնարարութեամբ քննութեան ենթարկել տալով՝ անմիջական տնօրէնութեամբ նոցին կարգադրուած են, կամ գէթ իրողութեանց ճշգրիտ տեղեկագրերն մատուցուած են Պատրիարքարանիս, որով Դատ. խորհուրդս մեծապէս օգուտ քաղած է՝ իր ընելիք որոշմանց եւ տնօրէնութեանց մէջ միշտ իրաւանց եւ արդարութեան մտադիր եւ պաշտպան կենալով, որոյ վասն Դատաս. խորհուրդն պարտաւորութիւն կը համարի՝ իւր շնորհակալութիւնը հրապարակաւ յայտնել առ պատուարժան թաղ. խորհուրդս՝ սր ամենայն բարեդիպութեանց մէջ իրենց գործակցութիւնը չեն խնայած Ազգ. Դատաս. խորհուրդէս:

Իսկ Բ. Դունէն հրամայուած աղերսագրերու դատաստանական քննութեանց վերջանալէն ետեւ՝ ըստ կանոնի իւրաքանչիւր խնդրոց համառօտակի քննութեանց պատ.

ճէնիւն հանդերձ, տրուած որոշումներն յատուկ տեղեկագրութեամբ մատուցուած են առ Պատ. ֆաղ. ժողովն, որ եւ 'ի նրկատի առնելով իրաց ճշդութիւնը, ըստ այնրմ վճռագրերն հաղորդուած են Բ. Դըրան 'ի գործադրութիւն: Արդէն. Ամեն. Ս. Պատրիարք Հօր եւ կրօն. ժողովոյ իրաւասութեան վերաբերեալ ինչ ինչ մասնաւոր խնդիրներ ալ տեղի ունեցած են, որ հետորդհետէ յատուկ տեղեկագրութեամբ պիտի մատուցուին առ սրբազումար ատեան կրօն. ժողովոյ:

Արդէն իւրաքանչիւր խնդրոց պարունակութիւնը համառօտեալ յարձանագրութենէ կը փութամբ ներկայացնել 'ի տեղեկութիւն Պատ. ֆաղ. ժողովոյդ եւ կը մընամբ մեծաւ ակնածութեամբ վսեմաշուք Տեարցդ եւ Ազգիս լրութեան:

Անձնուէր պաշտօնեայք.

1872 Մայիս 1

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Դատաստանական խորհրդոյ գործողութեանց տեղեկագրին ամբողջապէս հրատարակուելը սովորութիւն եղած չըլլալով այն մասը միայն պատշաճ կը դատիմք նըշանակել ուր տարուան մէջ իրեն ներկայացած զանազան խնդրոց վրայ, կատարեալ վիճակագրական տեղեկութիւնք ամփոփուած ըլլալով, բաւական կըլլան ազգային Դատաստանական խորհրդոյ ունեցած կարեւորութեան աստիճանը երեւան հանելու:

ԳԱԻՍՈՒԱԿԱՆ ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹԵԱՆՑ ԽՆԴԻՐ

Ժողովը նկատելով որ Գաւառ. Հարըտահարութեանց համար եղած զանազան գանդատներու համար ըստ սովորութեան գրուած թագրիրներուն համեմատ թէ եւ Բ. Դունն ազդու հրամանագիր կը շրկէ:

եւ կուսակալներն ալ նոյն հարստահարութիւններն իրենց բուն տեղը քննութեան առնել կուտան, բայց ըստ որում հարստահարեալք առ ահի չեն կրնար խոստովանիլ հոն իրենց դէմ գործուած բռնութիւնները, այս կերպով գանգատները կը ստեն եւ իբրեւ չեղած կը գրուին 'ի Բ. Գուռն. այս ցաւալի պարագային դարմանը խնդրելու համար մասնաւոր թագրիր մը մեծ Ե. պարքոսին մատուցուիլ որոշուեցաւ:

Եւ ըստ առաջարկութեան Գաւառ. Հարստահարութեանց Յանձնաժողովոյ որոշուեցաւ մասնաւոր շրջաբերականաւ մը պատուիրել բոլոր Առաջնորդաց որ իրենց վիճակին մէջ եղած մեծ կամ պզտիկ բոլոր այս տեսակ խնդիրներուն համար ընդարձակ օրագրութիւն մը հաստատեն եւ վեց ամիսն անգամ մը անոր բովանդակութիւնը վարչութեան հաղորդեն:

ԳԱՒԱՌԱԿԱՆ ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹԵԱՆՅ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ընդհ. Ժողովոյ որոշմամբ Քաղ. Ժողովին յանձնուած էր այս խնդրոյն վրայ յանձնախորհրին նշանակած դարմանները նկատողութեան առնելով սրբադրելի կետերն որոշել եւ Բ. Գրան տրուելիք տեղեկագիրը պատրաստել Ընդհ. Ժողովոյն ներկայացուելու համար:

Ժողովը նկատելով որ հարստահարութեան խնդրոյն մէջ երկրորդական են գրամական մասին եղած գանգատները, իսկ գլխաւոր եւ առաջինն է բարոյական ցաւերը բառնալու խնդիրը, որմէ կը ծագին մասնաւոր հարստահարութիւններ, որոշեց որ այս մասնաւոր հարստահարութեանց խնդրոյն վրայ ծանրանալու եւ անոնց պատճառներն դարմանելու խնդիրը հիմ բռնուի վարչութեանէն առ Բ. Գուռն տրուելիք տեղեկագրին մէջ:

Այս նպատակաւ Գաւառ. Յանձնախորհր ներկայացուցած տեղեկագրին մէջ այդ կարեւոր ու գլխաւոր մասերն ծաղկաբաղ ը-

ներու եւ Բ. Գրան տրուելիք տեղեկագրին ըստ այնմ պատրաստելու համար յանձնուեցաւ Երուսուփեան եւ փափաղեան էֆէնտիներուն. Եւ յաջորդ նստին մէջ փափաղեան էֆ. ի ներկայացուցած ծրագրը Ժողովին մէջ կարդուցուելէ եւ մէկ քանի թեթեւ գիտողութիւններով սրբադրուելէ ետեւ, Ազգային Ընդհ. Ժողովոյ ներկայացուելով եւ եղած գիտողութեանց համաձայն թագրիրը խմբագրուելէ ետեւ որոշուեցաւ որ Ս. Պատրիարքը անձամբ ներկայացնէ Մեծ Եպարքոսին իւր հետն ունենալով:

Կրօնական Դասեր

- Գեր. Կապուտիկեան Յովհաննէս Եպս.
- " Վարժապետեան Ներսէս "
- " Խորէն Վրդ. փոխ. Երուսաղէմայ
- " Տ. Յովհ. Մկրեան, Պատրք. փոխ.

Ընդհ. Ժողովոյ Կոմիտէ:

- Մանուկեան Սենեքերիմ էֆէնտի
- Փափաղեան Կարապետ "
- Պոյաճեան Յովհաննէս "
- Մէրեէմ-Գուլի Յարութիւն "

Քաղաքական Ժողովին:

- Նորատունկեան Յակոբ "
- Ֆրէնկեան Յակոբ "
- Ալանեան Մանուկ "

Մեծ Եպարքոսին այս կարեւոր խնդիրն նկատողութեան առնելու եւ պարտապատշաճը տնօրինելու մասին բրած խոստմունքը, արդէն պտտիկաւելի ատենիդ ծանօթ ըլլալով, աւելորդ կը համարիմք մանրամասնաբար յիշատակել:

ԲՆՆԻՉԻ ԿԱՍ ԱՅՅԵՆՈՒՐ Ի ԳԱՒԱՌՍ

Սրբազան Պատրիարք Հօր առաջարկութեան համաձայն, որոշուեցաւ քննիչ կամ

այցելու անուամբ, մէկ քանի բանիբուն եկեղեցականներ լուղարկել գաւառներուն մէջ. որոց պաշտօնը պիտի ըլլայ կանոնաւոր վիճակադրութիւն մը ընել գաւառաց նիւթական եւ բարոյական կացութիւնը ընդարձակապէս տեղեկագրելով: Իւրաքանչիւր գաւառի ժողովրդեան պիտոյքը իմանալ եւ դարմանը 'ի միասին նշանակել եւ ասկէ 'ի զատ իրենց տրուած հրահանգին համաձայն Սահմանադրութիւնը գործադրել այն վիճակներուն մէջ, ո'ւր տակաւին գործադրուած չէ:

Քաղաքական ժողովը պատշաճ դատեց յիշեալ պաշտօնատեարց իւրաքանչիւրին 500 զուրուշ ճամբու ծախք եւ 300 զուրուշ ամսական կեդրոնական սնտուկէն վըճարել:

Հետեւապէս Արժանապատիւ փլիպպոս եւ կիւրեղ վարդապետները Սեբաստիոյ եւ Տիգրանակերտի կուսակալութեանց եւ Գեր. Երեմիա Եպիսկոպոսն ու Արժան. Փիրղալէմեան Ղեւոնդ վարդապետը կարնոյ կուսակալութեան տակ գտնուած վիճակաց այցելու ընտրուեցան:

ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՔ Բ. ԴՐԱՆ ՀԵՏ

Ազգային զանազան խնդրոց վրայ եղած թագրիրներէն զատ, Ս. Պատրիարք Հայրն Քաղաքական ժողովոյ որոշմամբ մասնաւոր բանակցութիւններ ունեցաւ Մեծ Եպարքոսին, Արտաքին գործոց պաշտօնէին եւ Պետական Խորհրդոյ նախագահին հետ, մասնաւորապէս Չարսանճախի՝ Այնթապի զինուորական տրոց՝ Երուսաղէմայ Լատինաց հետ եղած վէճին, Բերայի գերեզմանատան եւ Ալքաղարի վէճին եւ ուրիշ մէկ քանի այս օրինակ հանրական խնդրոց համար, որոց իւրաքանչիւրն ըստ դասակարգութեան նշանակուած են տեղեկագրիս մէջ աւելորդ կը համարիմք կրկին յիշատակել:

ՓԱՐԻՉԻ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՊԱՐՏՈՒՅ ԽՆԴԻՐԸ

Այս խնդրոյն վրայ Բ. Դանէն եկած վերջին ծանուցագրին եւ Արտաքին գործոց պաշտօնատան կողմանէ եղած ստիպմանց նախորդ վարչութեանց օրովն տրուած պատասխաններն կրկնելով, զազգը դատապարտող վճռագիրն Պատրիարքարանի կողմանէ երբէք չկարենալ գործադրուիլն ծանուցանելով, պատշաճ լրատուած եղանակաւ յիշեալ վճռագրոյն վերաքննութիւնը պահանջուեցաւ:

ՍՍՈՅ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԱԿԱՆ ԽՆԴԻՐ

4 Մայիս. 1871. Սոյ կաթուղիկոսական խնդրոյն համար Բ. Դրան կողմէ սահմանուած գործակատարը՝ Խուրչիտ Էֆ. Քաղ. ժողովոյ ատեանին մէջ Ս. Պատրիարք Հօր ներկայանալով, ծանոյց որ պիտի երթայ կիլիկիա կաթուղիկոսական ընտրութեան եւ Նիկողայոս Եպիսկոպոսն Պօլիս ղրկելու համար Ազգին խնդիրն 'ի գործ դրնելու եւ սխտի աջակցի Պատրիարքարանի կողմէ կարգեալ ազգային գործակատարաց:

Սրբազան Պատրիարքն եւ ժողովն Ազգին խնդիրը եւ կայսերական հրամանը 'ի գործ դնելու պաշտօնն իրեն յանձնուելուն համար գոհունակութիւնը յայտնելէ ետեւ պաշտօնական նամակաւ մը, Ազգին կողմանէ կարգեալ տեսչոց տրուած հրահանգին գլխաւոր կէտերն իրեն ալ հաղորդել պատշաճ դատուեցաւ:

Խուրչիտ Էֆ. ճամբայ ելնելէն ետեւ հիւանդանալով ետ դարձեր էր, Սիմէօն Սրբազան՝ որ պատրաստուած էր ճամբայ ելնելու, այս պարագային վրայ ճամբէն ետ չմնալու համար որոշուեցաւ թագրիր գրել եւ խնդրել որ հեռագրով հրաման ղրկուի կուսակալին Սոյ Նիկողայոս Եպիսկոպոսը ղրկելու որպէս զի Ազգ. գործակատարներն անմիջապէս երթալով նոր կաթուղիկոսի ընտրութեան Հրահանգն 'ի

գործ դնելու կարող ըլլան :

Այս միջոցին Հալէպու Առաջնորդին կողմէ եկած հեռագրին վրայ որոշեցաւ պատասխանել իրեն թէ Բ. Դրան կողմէ հրատարեալ խուրչիտ էֆ. ին տեղ նոր պաշտօնեայ կարգուած Լէպիպա էֆ. ճամբայ ելած է պէտք եղած Հրահանգներով, որոց գործադրութիւնը ամեն անտեղութիւն պիտի բառնայ :

Ալիքսան էֆ. յայտնեց թէ Սոյ նիկողայոս Եպիսկոպոսը ոստիկանութեան հրահրութեան ներքեւ Պօլիս հասեր է շաբաթ իրիկուն եւ ուղղակի Բ. Դուռը տարուեր է. Յիշեալ Եպս. հոն յայտներ է թէ Բ. Դուռը զինքը ուր որ զրկէ, պատրաստ է երթալու, միայն թէ Հայոց Պատրիարքարանը չերթար : Ասոր վրայ Բ. Դուռը զինքը Սուլթան Մէհմէտի հիւրանոցը զրկեր է : Այս գործողութենէն ետքը Բ. Դուռը Ալիքսան էֆ. ին յանձնարարեր է որ Պատրիարքարանը այս մասին պէտք եղածը տնօրինէ :

Ժողովը որոշեց թագրիւր մատուցանել Բ. Դրան խնդրելով որ նիկողայոս Եպս. ոստիկանութեան հսկողութեան ներքեւ ուղարկուի յԱրմաշ :

Սիմէօն Սրբազան օգոս. 28 թուականաւ Մէրսին հասնիլը գրելով կը յայտնէ թէ հետեւեալ օրը թէրսիս պիտի երթայ եւ անկէ յԱտանա. կը յաւելցնէ թէ Սսեցի Յարութիւն Եպս. Ատանա բերուեր է եւ հոն վերստին տաճկնալ ուզելով՝ կուսակալը վար դրեր է եւ հարկաւ պիտի տեղեկագրէ առ Բ. Դուռն յորմէ եւ Պատրիարքարանին կը ծանուցուի : Այս համառօտ տեղեկութիւնը տալով՝ Ատանա հասնելէ ետեւ մանրամասն գրել կը խոստանայ : Ժողովը սոյն տեղեկութիւնը արձանագրել եւ նոր տեղեկութեանց սպասել որոշեց :

Ատանայէն Սիմէօն Սրբազանի զրկած վերջին նամակները կարդացուեցան, որով կը գանգատի տեղւոյն կուսակալէն եւ զայն պաշտօնէ ձգել տալու խնդիր կընէ. Յիշեալ կուսակալը կառավարական Ժողովոյն

Հայ անդամը հրատարեցուցեր եւ տեղը նորեկ Հռովմէական մը դրեր է, Սսեցի Յարութիւն Եպս. տաճկացած ըլլալու պատրուակաւ որոշեալ աքսորատեղին ՚ի կիպրոս չզրկելով՝ վար դրեր է հոն, նաեւ տեղւոյն իսլահանէի հայ աշակերտներէն մին տաճկութեան կը համոզէ եղեր, եւ Սիմէօն Սրբազանի բողոքոյն վրայ առ այժմ կախ ձգեր է :

Սիմէօն Սրբազան նաեւ տեղական Ազգ. Ժողովոց կազմութեան համար Սահմանադրութենէ դուրս ինչ ինչ առաջարկութիւններ ըրած էր, պատճառելով թէ տեղւոյն ազգայնոց ընդհանրապէս ռամկութիւնը Սահմանադրութեան յար եւ նման ընտրութիւններն առ այժմ չկրնար տանիլ :

Ժողովը տեղեկանալով որ Ատանայի նոյն կուսակալը այս օրերս իր պաշտօնէն ինկած եւ նոր կուսակալ մը ընտրուած է որոշեց թագրիւր գրել Յարութիւն Եպս. ին ՚ի կիպրոս զրկուելուն վրայօք նորընտիր կուսակալին ուղղեալ հրամանագիր մը խնդրելու համար : Նոյնպէս որոշեց թագրիւր գրել տեղւոյն իսլահանէի 17 ասրեկան Հայ տղային համար որ տաճկացնելու կը համոզեն եղեր, նաեւ կառավարական Ժողովոյն հրատարեալ Հայ անդամին վերահաստատութիւնը խնդրելու համար թագրիւր գրել :

Իսկ Ատանայի Ազգ. Ժողովոց կազմութեան վերաբերեալ խնդիրը Գործ. Յանձնաժողովոյն յանձնել եւ անոր դիտողութիւնըն ստանալէ ետեւ Սիմէօն Սրբազանին պատասխանել որոշուեցաւ :

Ս. Պատրիարքը ծանոյց որ առջի օրը Սոյ կաթողիկոսական ընտրութեան խընդրոյն վրայօք Ատանայէն ստիպողական հեռագիր մ'եկած ըլլալով՝ այսօր արտաքոյ կարգի ժողով գումարել ստիպուած էր : Ուստի տտեանը բացուելով յիշեալ հեռագիրը նկատողութեան առնուեցաւ : Խընդիր եղաւ թէ Գաւառ. Ժողովն ինչո՞ւ ընտրուած 13 Եպիսկոպոսաց ցանկէն 6 առաւելագոյն քուէ ունեցողներուն անունները հաղորդեր է, եւ թէ վարչութեան

զրկած հրահանգին համեմատ հարկ չէ՛ր որ 13 ընտրելոց ալ անուններն միանգամայն նշանակուէին :

Կոստան էֆ . դիտեց թէ Գաւառ . Ժողովոյն ընտրելեաց ցուցակը կրճատելը կերպիւ մը վարչութեան ընտրութեան վրայ ունեցած իրաւունքը կը սեղմէ :

Ս . Նախագահը դիտեց որ գործը խիստ փափուկ եւ այնքան ստիպողական է որ այնպիսի փոքր թերութիւններ կրնան ներելի ըլլալ ընտրութիւնը չերկարածուելու համար :

Երեսուֆեան էֆ . կարծիք յայտնեց որ ընտրելեաց ցուցակ ներկայացնելը դաւառացւոց իրաւունքն ըլլալով՝ կրնան քանի հոգիի ցուցակ ուղեն , զրկել . եւ վարչութիւնը այս անգամ ներկայացեալ 6 անձանց ցանկին վրայ իւր սրբագրութիւնն ընելով կը դարձնէ , միանգամայն մնացեալ 7 ընտրելեաց անուններն ալ գիտնալու համար կրնայ պահանջուիլ Գաւառ . Ժողովէն , ընտրելեաց ցուցակին սրբագրութեան գալով՝

Ս . Նախագահի առաջարկութեամբ որոշեցաւ Երուսաղէմայ եւ Պօլսոյ Պատրիարքներն նոյն ցուցակէն հանել , որովհետեւ ըսաւ Պատրիարքներն Ս.զգ . Ընդհ . Ժողովըն է ընտրողը , վարչութիւնը չկրնար անոր ընտրած Պատրիարքներն Սոյ կաթուղիկոսական ընտրելեաց մէջ ձգել իրրեւ ընտրելի , մանաւանդ որ Երուսաղէմայ Պատրիարքներն ցկեանս Պատրիարքական պաշտօն վարելու ուխտեալ են :

Հետեւապէս ընտրելեաց ցանկին մէջ կը մնան ,

- Մկրտիչ Եպիսկոպոս Հալէպի
- Ներսէս " Նիկոմիդիոյ
- Արիստակէս " Գաղատիոյ
- Սիմէօն " Երուսաղէմի , որ թէ եւ հրաժարական մատուցած էր , բայց ժողովը պատշաճ չդատեց անոր անունը ցանկէն դուրս ձգել :

Որոշուեցաւ յառաջիկայ երեքշաբթի օր կրօնական Ժողովն ալ հրաւիրել խառն Ժողով կազմելու համար , եւ համախորհուրդ վերջին որոշումը տալէ ետեւ՝ անմիջապէս

պէտք եղած հեռագիրը զրկել Ստանա .

Ստանայէն եկած հեռագիրը նորէն կարդացուեցաւ 'ի ներկայութեան Ներսէս Եպիսկոպոսի եւ խասգլուղի Տ . Գէորգ աւագ քահանայի իրրեւ Սնդամբ կրօն . Ժողովոյ , խառն Ժողովը դիտողութեան առնելով՝ միայն Պօլսոյ եւ Երուսաղէմի Պատրիարքները հանել որոշեց :

Թէ եւ Ներսէս Եպիսկոպոս անձամբ եւ Սիմէօն Եպս . հեռագրով հրաժարեցան բայց անընդունելի դատուեցաւ անոնց հրաժարականը : Ուստի կաթուղիկոսական ընտրութիւնը մնացեալ 4 Եպիսկոպոսաց վրայ միայն ըլլալու համար , անմիջապէս հեռագիր զրկել որոշուեցաւ :

Նախորդ նստին 26 հոկտ . խառն Ժողովոյ որոշման համեմատ կաթուղիկոսական ընտրելեաց սրբագրեալ ցուցակը զրկուեցաւ անմիջապէս Ստանա Սիմէօն Եպս . ի հեռագրով : Ս . յս հեռագիրը զրկուելէ ետեւ հոկտ . 28 ին հեռագիր եկաւ Ստանայէն Սիմէօն Եպս . ի եւ Ֆրէնկեան էֆ . ի ստորագրութեամբ որոյ (պատճէնն տես Ստենագ .) Քաղ . Ժողովոյ գումարումէն առաջ Ս . Նախագահը Ժողովոյ Դիւանին հետ խորհրդակցելով՝ սոյն հեռագրին 'ի պատասխան Սիմէօն Եպս . ին եւ Ֆրէնկեան էֆ . ին հեռագիր մը զրկած էին հոկ . 29 ին . որոյ օրինակն է ,

“ Կաթուղիկոսական ընտրութեան հեռագիրնիդ առինք , փափուկ պաշտօննիդ անդորրութեամբ 'ի գլուխ հանելնուդ եւ Մկրտիչ Ս . ի ընտրութեան համար գոհունակութիւն կը յայտնեմք :

“ վաւերացման ստիպողականութիւնը կը ճանչեմք բայց գիտէք թէ Ընդհ . Ժողովը որոշած է յարաբերութեանց խնդրէն ետքը կատարել որ հարկաւ կերկարի : Ուստի կրնայ Մկրտիչ Սրբազան հեռագրել մեզ եւ վարչութեան անուան նամակ մը յանձնել Ձեզ թէ Ընդհ . Ժողովոյ յարաբերութեանց մասին ընելիք տնօրէնութիւնը կրնդունի , որպէս զի վաւերացումն անմիջապէս կատարուի , այն ատեն հեռագրով զինքը շնորհաւորելով յիշա

« տակութեան հրահանգը կրնամք տալ .

Նոյն օրը անմիջապէս հետեւեալ հեռագիրն ալ հասած էր Ատանայէն . Սիմէօն Եպս . ի ստորագրութեամբ .

« Երէկ ընտրուած կաթուղիկոսը հանդիսիւ իր նստած տնէն Առաջնորդարան փոխադրեցինք խուռն բազմութեամբ . ժողովուրդը շատ ուրախ է , կիրակի ալ եկեղեցի կիջեցնեմք : կաղաչեմ փութով Բ . Գուռն պէտք եղածը հաղորդէք , որպէս զի պաշտօնապէս տեղւոյս վալիին հեռագրով ծանուցուի գործը բոլորովին աւարտի . Գաւառէն եկողները իրենց ընտրութեան արդիւնքին կապասեն որ տեղերնին դառնան : Սպասելու երբէք ատեն չունին , իրեն ալ տակաւին շնորհաւորութեան հեռագիր չեկաւ . Մեր այս հեռագրին պատասխանը անմիջապէս տալերնիդ կաղաչեմ , թէ եւ կաթուղիկոսը հեռագիր դրած է , սակայն ուշադրութիւն ընելու չէ » :

Նոյնպէս Մկրտիչ Սրբազանէն հեռագիր մ'եկած էր , որով իր հրաժարականը կը հաղորդէր .

Աւստի հոկտ . 31 կիրակի օրը մասնաւոր նիստ մ'ընելով Օրթագիւղ գտնուող ժողովականք , նոցա որոշմամբ թէ՛ Սիմէօն Եպս . ին եւ թէ՛ Մկրտիչ Սրբազանին մէկ մէկ հեռագիր քաշուեցան :

Ատանայէն նոյ . 1 ին հեռագիր եկաւ . ժողովն այս ընտրութեան վերջին պարագայներուն վրայօք սոյն տեղեկութիւններն ստանալէ ետեւ վարչութեան կողմէ նորոգ զարնուած յիշեալ երեք հեռագիրներն ընդունելի դատելով՝ հաստատեց եւ որոշեց իր տուած հրահանգին համեմատ Ատանայէն գալիք նոր տեղեկութեանց ըստ պասել , որպէս զի ըստ այնմ ընտրութեան վաւերացման խնդիրը լնդհ . ժողովոյն ներկայացուելով՝ անյապաղ պէտք եղածը անօրինուի .

Ատանայէն Սոյ նորընտիր կաթուղիկոս Մկրտիչ Սրբազանին զրկած հեռագիրը կարգացուեցաւ , յորմէ կը հասկցուէր թէ իր հրաժարականն ետ առած եւ իր կա-

թուղիկոսական ընտրութիւնն ընդունած է :

Նոյնպէս Ատանայէն Սիմէօն Եպս . ի զրկած տեղեկագիրն ընթերցաւ , որով կիւրիկիոյ կաթուղիկոսի ընտրութեան համար վիճակային Գաւառ . ժողովոյ կազմութեան արդիւնքը կը յայտնէր , եւ միանգամայն կը ստիպէր զվարչութիւնը որ կաթուղիկոսի ընտրութեան վաւերացումն չյապաղեցնէ : Եւ որովհետեւ հոկտ . 29 եւ 31 թուականօք զրկուած վերջին հեռագրերուն պատասխանը չէր եկած տակաւին , որով հըրահանգ տրուած էր Սիմէօն Եպս . ին , որոշեցաւ նոյն հրահանգին պատասխանը խնդրելու համար Սիմէօն Եպս . ին նոր հեռագիր մը քաշել .

Ատանայէն նոր եկած հեռագիրը կարգացուեցաւ , որով Սիմէօն Եպս . կը յայտնէ թէ Մկրտիչ Սրբազանէն վարչութեան անուան պէտք եղած նամակն ստացած է , եւ կը խնդրէ վաւերացման որոշումը փութացնել .

Որոշուեցաւ յառաջիկայ ուրբաթ աւուր գումարելի լնդհ . ժողովին ներկայացնելու համար լնդհ . ժողովոյ խնդրոց կարգըն անցնել տալ այս խնդիրը . Ս . յս մասին Քաղ . ժողովոյ կողմէն լնդհ . ժողովոյ ներկայացուելու համար տեղեկագիր մը պատրաստուեցաւ .

Սաքայեան էֆ . յայտնեց թէ Սոյ կաթուղիկոսին ընտրութեան կատարուած ըլլալն Բ . Գրան ալ հեռագրուեր է արդէն իւր զրկած պաշտօնատարին կողմէ :

Ատանայէն Սիմէօն Եպս . հեռագրով մը յայտնած է թէ ինչպէս կանխաւ իմացուցած էր , նոյ . 28 ին կիրակի օրը նորընտիր կաթուղիկոսի օժման հանդէսը կատարուեր է , եւ թէ իր պաշտօնը վերջացած ըլլալով՝ պիտի իջնէ 'ի Մէրսին :

Որոշուեցաւ նամակաւ իրեն պատասխանել վարչութեան գոհունակութիւնը յայտնելով իւր պաշտօնը յաջողութեամբ աւարտելուն համար , եւ ծանուցանել որ առ այժմ Ս . Երուսաղէմ այցելութիւն մ'ընէ . եւ առաջիկայ զարնան Պօլիս վերադառնայ :

Էջմիածնի վեհ . կաթուղիկոսէն Գաղղ . հեռագիր մը հասած էր , առ Ս . Պատրիարքն , զոր ներկայացոյց ժողովին :

Որոշուեցաւ հեռագրով պատասխանել նորին վեհափառութեան թէ իւր կասկածներն անհիմն են , եւ թէ մանրամասն տեղեկութիւնները նամակաւ իրեն պիտի հաղորդուին :

Հետեւապէս Ս . Պատրիարքին յանձնուեցաւ որ նամակ մը պատրաստէ այս մասին . վեհ . կաթուղիկոսին զրկելու համար :

Ս . Էջմիածնայ վեհ . կաթուղիկոսին Սոյ կաթուղիկոսական խնդրոյն առթիւ վարչութեան կողմէ զրկուելի յայտագրոյն վերջին խմբագրութիւնը լմնցած ըլլալով այսօր կարգացուեցաւ . եւ որոշուեցաւ մաքուր օրինակը քաշելով անմիջապէս զրկել :

Կիլիկիոյ նորընտիր կաթուղիկոսին հաստատութեան հրովարտակը Բ . Դուռն օրէ օր ձգելով երկարելուն համար , որոշեցաւ բողոքոյ թագրիր մը գրել եւ Ս . Պատրիարքին յանձնուեցաւ որ նաեւ անձամբ երթայ արտաքին գործոց պաշտօնէին հետ խօսի այս մասին :

Կիլիկիոյ Մկրտիչ Ս . կաթուղիկոսին վերջին քանի մը գրութիւններէն քաղելով այն անպատեհութիւնները որ իր ֆէրմանին ուշանալէն յառաջ եկած են , զանոնք յատուկ թագրիրով մը վերստին Բ . Դրան ուղարկութեան յանձնել որոշուեցաւ :

ՀԵՌԱԳԻՐ Ա .

4 Նոյ . ըստ Եւրոպիոյ 1871 . Ատանայէն Սիմէօն Եպսի . եւ Ֆրէնկեան Յովհաննէս էֆէնտիի հեռագիրը :

Գաւառական ժողովն երկու նիստ ունեցաւ երէկ եւ այսօր մեծագոյն մասամբ քուէ ստացան 13 եպիսկոպոսունք : Ժողովն որոշեց վեց առաւելագոյն քուէ ընդունողք վարչութեանդ հաղորդել . Մկրտիչ եպիսկոպոս Հալէպի 33 քուէ , Ներսէս

26 , Պատրիարք Պօլսոյ 20 , Արիստակէս Գաղատիոյ 17 , Սիմէօն 12 , Պատրիարք Երուսաղէմի 11 . ահա քուէից արդիւնքը , որոնց երեքին որոշման փութով կսպասենք : Երեսփոխանք երբէք սպասելու ժամանակ չունին , թէ ոչ դուրսէն եկողք կը ձգեն կերթան , հեռագրով ժամ առաջ ցուցուցէք , այդ տեղէն եկած երեք անուանց մէջ եթէ իմ անուն գտնուի , պէտք է դուշակէք որ բոլոր գործեր կը խանգարուի . ուստի վերոյիշեալ մեծ քուէ ունեցողք ըլլալու են . դարձեալ կը կրկնեմ , իմ անունս վերագարձած ցանկին մէջ չգտնուի :

Պատասխան

Հեռագիր առ Սիմէօն Եպս . Ստանա

Ազգային վարչութիւնը ընտրելեաց ցանկին մէջէն Պօլսոյ եւ Երուսաղէմայ Պատրիարքունք միայն դուրս հանելով միւս չորսը կընդունի իբրեւ ընտրելի , որք են ,

- Մկրտիչ Եպս . Հալէպի
- Ներսէս " Նիկովիդիոյ
- Արիստակէս " Գաղատիոյ
- Սիմէօն " Երուսաղէմի

26 Հոկտ . 71 (Ստորագրութիւն) Պ . Կ . ԵՐԵՄԵԱՆ

ՀԵՌԱԳԻՐ Բ .

9 Նոյ . ըստ Ե . 1871 . Ատանայէն Սիմէօն Եպսի . եւ Ֆրէնկեան Յովհաննէս էֆէնտիի հեռագիրը :

Գաւառական ժողովն երրորդ նիստ ըրաւ այսօր , Պօլսէն եկած հեռագրի ցանկին վրայ քուէարկութիւն կատարեց , քուէի ամբողջութիւն 35 էր , Մկրտիչ Եպս . որ հոս 28 քուէ , Արիստակէս 6 , Ներսէս 1 , ստացան , բացարձակ առաւելութեամբ Մկրտիչ Սրբազան Կիլիկիոյ կաթուղիկոս ընտրուեցաւ , որուն վաւերագիրը հեռագրով վաղվաղակի յուղարկէք եւ Բ . Դուռ

լուր տուէք որ տեղւոյս վայիին հեռագր-
րով ծանուցանէ . յամանակ պէտք չէ ան-
ցընէք հեռագրիդ կտպասեմք որ կիրակի
եկեղեցեաց մէջ յիշել տամք . իրեն շնոր-
հաւորութեան հարկ եղած հեռագիր կը-
նէք .

Պատահան

Բ. Հեռագրի Առ Սիմէօն Եպս . եւ Թը-
րէնկեան Բովհաննէս Էֆ . յԱտանա .

Կաթուղիկոսական ընտրութեան հեռա-
գիրնիդ առինք , փափուկ պաշտօննիդ ան-
գորրութեամբ գլուխ հանելուդ եւ Մը-
կըրտիչ Սրբազանի ընտրութեան համար գո-
հունակութիւն կը յայանեմք .

Վաւերացման ստիպողականութիւնը կը
ճանչեմք , բայց զիտէք թէ ընդհ . Ժողո-
վը որոշած է յարաբերութեանց խնդրէն
ետքը կատարել , որ հարկաւ կերկարի .
Ուստի կրնայ Մկրտիչ Սրբազան հեռագր-
րել մեզ եւ վարչութեան անուան նամակ
մը յանձնել Ձեզ թէ ընդհ . Ժողովոյ յարա-
բերութեանց մասին ընելիք անօրէնութիւ-
նը կընդունի , որպէս զի վաւերացումն ան-
միջապէս կատարուի . այն ատեն հեռա-
գրով զինքը շնորհաւորելով՝ յիշատակու-
թեան հրահանգը կրնամք տալ .

29 Հոկտ . 71

(Սրբազան Էֆէն)

Պ. Կ. ԽՐԻՍՏԱՆ

ՀԵՌԱԳԻՐ Գ.

29 Հոկտ . 71. Ատանայէն Մկրտիչ Սրբա-
զանի հեռագիրը .

Հազգ աճիղանէմտէ սէվկիւլիւ միլլէթի-
մին կէօսթերտիկի հիւսնիւ թէվէճճիւհէ
միւթէչէքքիւրիւմ , անճաղ միճուտըմքն ա-
լիլիկիսի քէնտիմին լոյրդօրղըկընը մէմու-
րիյէթին միւշիլիլիյէթինի թամիր գապուլ
իթմէզ պիշարէլիկինի պիլիթիթար պէհէմէ-
հալ իսթիֆամքն գապուլինէ հիմմէթլէրինի
թէմէննի իտերիմ էֆէնտիմ .

ՆՄ թշրին էվվէլ 71

Պատահան

Առ Մկրտիչ Սրբազան յԱտանա .

Սրղէն Սիմէօն Եպս . ին հեռագրած եմք
Ձեր ընտրութեան համար վարչութեան
գոհունակութիւնը եւ հրաժարականնիդ
չընդունուիլը , ուստի Ձեր փափուկ պաշ-
տօնին գործադրութեանը համար վարչու-
թեան օժանդակութեանը վրայ զՁեզ վըս-
տահայնելով կը շնորհաւորեմ եւ Սիմէօն
Եպս . ին տրուած հրահանգին գործադ-
րութեանը կտպասեմ .

31 Հոկտ . 71

(Սրբազան Էֆէն)

Պ. Կ. ԽՐԻՍՏԱՆ

ՀԵՌԱԳԻՐ Գ.

11 Նոյ . ըստ է . Ատանայէն Սիմէօն Ե-
պիսկոպոսի հեռագիրը .

Երէկ ընտրուած կաթուղիկոսը հանդիսիւ
իւր նստած անէն Առաջնորդարան փոխադ-
րեցինք խումն բաղմու թեամբ , ժողովուրդը
շատ ուրախ է , կիրակի ալ եկեղեցի կըլնը-
նենք , կաղաչեմք . Գուռ պէտք եղածը հա-
ղորդէք , որպէս զի պաշտօնապէս տեղւոյս
վայիին հեռագրով ծանուցուի , գործը
լորովին աւարտի . Գուռաէն եկողները ի-
րենց ընտրութեան արդիւնքին կտպասեն ,
որ տեղերնին գառնան , սպասելու երբէք
ատեն չունին , իրեն ալ տակաւին շնորհա-
ւորութեան հեռագիր չեկաւ . Մեր այս
հեռագրին պատասխանը անմիջապէս տա-
լերնիդ կաղաչեմք , թէ եւ կաթուղիկոսը
հեռագիր գրած է , սակայն ուշադրու-
թիւն ընելու չէ .

Պատահան

Առ Սիմէօն Եպս . յԱտանա

Մկրտիչ Սրբազանին հեռագրեցինք թէ
հրաժարականը չեմք ընդունիլ , մեր վեր-
ջին հեռագրական հրահանգին պատաս-

